

ՅՆՕՐԷՆ-ԽՍՐԱԳՐԱԳՈՒՅՈՑ
Z. ՄԱՄՈՒՐԻԱՆ
 ԲԱԺԵՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ
 Տարեկան 300 դր.
 Վեցամսեայ 250
 Եռամսեայ 150
 Արտաստեղծի արկ.



Fondateur
M. MAMOURIAN
 Directeur-Rédacteur en chef
H. MAMOURIAN
 „Arévelian Mamouli,
 JOURNAL ARMÉNIEN
 QUOTIDIEN

100 ՓԱՐԱ

Օրաթերթ ազգային եւ Բաղաճական

100 ՓԱՐԱ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Անցեալ հինգշաբթի օր այս սիւնակներուն մէջ անդադրուած Յունաստանի Ալեքսանդր Երիտասարդ թագաւորին անակնկալ մահուան վրայ, այն գաղափարը կ'յայտնէինք որ Հելլէն Վարչապետը՝ Նախաձեռնարկութիւն համարի ընդհանուր երեսփոխանական ընտրութիւններէն վերջ գահու յաջորդութեան խնդիրը լուծելու:

Հելլէնացի մեծ հայրենասէրն ու գիւտնազէտը իր վերջին յայտարարութիւններով կ'հաստատէինք որ արդէն շատ գիւրբին էր Նախատեսել և ընդգիծագիր կուսակցութեան պետ Պ. Կունարիսի անհեթեթ յայտարարութիւններուն պատասխանել ստիպուելով՝ Վէնիզէլոս կ'ըստատէ որ գահու յաջորդութիւնը Ալեքսանդր թագաւորին վաղահաս մահուամբ՝ անոր կրտսեր եղբոր կը վերահսկուի, ըստ անձնականորակ օրինակ, սակայն որովհետեւ ընդհանուր ընտրութիւններ պիտի կատարուին, լուսաբոյն պիտի համարի ազգին փոփոխութիւնը ևս նկատողութեան առնել և ընտրութիւններէն վերջ, միանգամ ընդ միշտ լուծելու ապագայ գահակալին զիրքը:

Ընդգիծագիր կուսակցութեան պետը Պ. Կունարիս իր կուսակցութեան անհուսահատ յաջողութիւնը և տկարութիւնը պարտկելու նպատակով, զարտուղի միջոց մը կ'ընտրէ և ժողովուրդին կամքին յանձնել կ'յանձնարարէ գահու յաջորդութեան խնդիրը. մինչդեռ Վէնիզէլոս կուսակցութիւնը իր հակառակորդներու խաղը, բացայայտ կերպով կ'ընդլայնէ գահակալութեան հարցը և կ'հաստատէ որ յառաջիկայ երեսփոխանական ընտրութեանց առթիւ արդէն հարկ պիտի ըլլայ ընտրողներու առջև դնել նաև ապագայ թագաւորին հարցը և ժողովուրդի քուէարկութեամբ ընելիք դատաստանէն վճռելու յաջողի, թէ Հելլէն սղջը որու կ'վստահի իր ճակատագրին վարիչն ըլլալ:

Վէնիզէլոս՝ քննականաբար չպիտի կրնար ընդունիլ, թէ ընտրական գործողութիւններէն անկտ, թագաւորական ուրոյն հարց մը կրնար գոյութիւն ունենալ և ընտրական գործողութեանց արդիւնքին հետ միասին լուծուած ու վճռուած կ'ընդունի այս խնդիրը:

Ուրիշ առիթներով՝ զարմանք յայտնած էինք որ Յունաստանի ընդգիծագիր կուսակցութիւնը փոխանակ երկրին յառաջդիմութեան ու զարգացման ոյժ տալու, իր ըմբռնած ձեռով ու միջոցներով, խնդրոյ առարկայ կը նէ հրաժարեցուցուած թագաւորի մը յաջորդութեան պարզան, առանց անդադրուելու ուղիւ, որ Կոստանդինի իշխանութիւնը ազդեցութիւն հետեւեալներ, պիտի ունենար և այսօր Յունաստան՝ պիտի հաւասարէր Պուլկարիոյ ճակատագրին, որ անմիտ Գերմանիայի մը և Նոյն ժամանակ Ռուսոստալու վրի մը զոհը եղաւ:

Ընդհակառակը ընդգիծագիրները պետք է խորհին Վէնիզէլոս մը ստեղծել, եթէ չունենային այդ յստակատես ու գիւտնազէտ մեծ կրէտացին, այն ճղմտամային րոպէներուն, ուր Կոստանդինի չէզոքութիւն պահելու պատրասակին տակ, գաղտնի կ'ընտանցէր իր սիրական Վիլհէլմին հետ, պետական հարուածով մը Համաձայնականներու զլլուն փորձանքներ պատրաստելու և Սիլանդիկի Համաձայնական բանակը ծովը թափելու համար:

Ալեքսանդր զբաղեցեալ թագաւորին կրտսերը, զարմանալի է որ անոր հօր անորոքակը սրած ըլլալ կ'երևի և իր զաւկին մահը՝ իր բռնած ընթացքէն գտակով, իրեն գոհունակութիւն իսկ պատճառ՝ Հելլէն գահը կրկին բարձրանալու համար, առանց խորհելու, որ այդ գահը բաղձած ժամանակ չյաջողեցաւ զայն հաստատուն պահել ու պահպանել և Նոյն իսկ չտատասանեցաւ համաձայնական Նաւաղներ կոտորել տալ, իւր գերմանասիրութիւնը կրկին ու կրկին ապացուցանելու համար:

Կոստանդինի՝ եթէ իրապէս կ'սիրէ իր հայրենիքը և անոր անգործութեան ու բարգաւաճման բազմացող մըն է, եթէ իրապէս զընտացած է անցեալին մէջ գործած սխալներուն համար, իր մեծանձնութիւնը, զընտրուած յայտնելու միակ միջոց մը կ'ենթարկուայ իր առջև, պաշտօնապէս հրաժարել գահէն, հանդիսաւորապէս երգում ընել թէ այլևս հետամուտ չպիտի պիտի ըլլայ գահ բարձրանալու և թողուլ որ Հելլէն ժողովուրդը իր կամքը յայտնէ և իր թագաւորը ընտրէ յանձին իր կրտսեր որդւոյն:

Այս մեծանձն թեթիւ կ'ըլլանայ Կոստանդինի և Յունաստանի ներքին մասնակի երկպառակութիւններէն թերեւս հաճոյք իսկ կ'զգայ, ինչ որ անվայել է հայրենասէրի մը և նամանուանդ նախկին թագաւորի մը համար:

Այսքան նրբամտութիւն իսկ կ'պակսի իրմէ, չսպասել ընտրութեանց արդիւնքին, ուր բացորոշ կերպով Հելլէն ժողովուրդը պիտի յայտնէ իր կամքը, թէ համակարծիք չէ իրեն և իր պաշտամունքին առարկայ կ'ընայ Վէնիզէլոս, որ իր գարաւոր բաղձանքներուն գահացում տալ յաջողեցաւ իւր ուղիղ ու հեռատես քաղաքականութեամբ:

Կոստանդինի իր կարճատեսութիւնը ներկայ առթիւ ևս ցոյց կուտայ և անգամ մըն ալ կ'հաստատէ թէ ինք ատակ չէ տիրելու և կուսակցութիւն, որովհետեւ դեռ յոյս ունի, որ ընդհանուր ընտրութիւնները իրեն նպատակարար կրնան ըլլալ, մինչդեռ ամեն ուղիղ խորհող, կրնայ այժմէն հաւաստել թէ ազգին կամքը զէպի Վէնիզէլոս և անոր կուսակցութիւնը կ'յայտի և ջանքերի մեծամասնութեամբ մը պիտի թողնուի ազատական կուսակցութեան շուրջը:

Հ. Մ.

ՀԱՅՅԵԼԵՆՆ ՄԱՅՑ

Այնքանի որ ևէ կողմ գտնուած իրարարանական վարժարաններու մէջ, այն աշակերտները, որոնք երկրորդ տարեշրջանը կ'ընթակոխեն, կարգ մը գիւտնազիտական կրտսերներու և օրէնքներու հետ, կ'ծանօթանան նաև որ մեծ պետութիւններու մօտ, փոքր կամ երկրորդական տէրութիւնները՝ զի անազիտական ներկայացուցիչներ կրնան ունենալ և ոչ թէ նոյնիսկ երկրորդ կարգի գեսպաններ:

Միևնոյն ժամանակ կուսին որ գործակաւոր, ներկայացուցիչ, հիւպատոս, երկրորդ կամ առաջին աստիճանի դեսպան կարգելու համար, այն տէրութեան որու մօտ պիտի ուղարկուին, նախապէս հաւանութիւնը կը ստանան և յետոյ անուանուելիք անձին համար ալ անոր կարծիքը կ'ընտրուի, որովհետև կրնայ ըլլալ որ կարգուելիք ներկայացուցիչը՝ գրաւած չըլլայ համակրութիւնը այն տէրութեան որու մօտ պիտի անուանուի:

Ինչպէս ըսի, օրէնքը կամ կանոնը բացայայտ է այս մասին և զայն կ'ուսանին իրաւագիտական վարժարան յաճախող աշակերտները իրենց երկրորդ դասընթացին:

Եթէ երբեմն գիտողութիւններ և քննադատութիւններ կ'ընեն ընդդէմ մարդիկ թերթերը՝ մեր այժմու կառավարութեան այս կամ այն ներկայացուցիչին համար, այդ քննադատութիւնները ոմանք անմարտիկ կ'ըլլան և առանց նկատի առնելու թէ հայտնութիւններ կամ նախաձեռնութիւններ չեն պարունակեր, կուզեն ազատ խօսքը կապել, որպէս իրենց կրտսերը չտապալին և անախարկանութեան պատուանդանին վրայ ամուր պահուին:

Անգին իրենք բոլոր հայութեան համակրանքին ու պաշտումին առարկայ եղող քանի մը անձերու դէմ, ըլլալ Պօղոս Նուպարը, ըլլալ Անդրանիկը, ազդեցութիւն չմտա որ չը թափին, հայտնութեանց տեսակները կ'ստեղծեն, անոնց այդ ազատաստութիւնը պէտք է ներքին և միևնոյն ժամանակ մարտիկ ըլլայ, որովհետև հայութեան մէջ երկու չափ և երկու կը իր գոյութիւն ունենալու և ըստ իրենց հաւատքին:

Երբոր փաստերով ու իրողութիւններու վրայ յենած քննադատութիւններ կ'ընեն, ջիղիւրներ կ'դպի և փոխանակ փաստերու դէմ՝ փոստով, իրողութիւններու դէմ՝ փոստով, իրողութիւններու դէմ՝ փոստով, կ'ստատասանելու, կ'հայտնեն, կ'անարգեն և գտնուին նաև աշխարհի վիճակներու դասակարգէն ոմանք, որ իրենց բարկութիւնը այդ քննադատութիւնները հրատարակող թերթէն կ'առնեն, զայն ցիտտելով և պատը գամելով...:

Եւ անա իրաւունք չհասած, յաղթանակը տարած կ'կարծեն, ցաւապար միջոցներ, արգահատելի, սակայն երբէք մեղադրելի չեն, որովհետև կարճատեսութիւնը, անտեսութիւնը բուժելի չի տես մը չէ, և բժշկութիւնը դեռ չէ յաջողած ծննդնէ պակասատրեւրու գարմանը գտնել...:

Միջանկեալ այս քանի մը տողերէն վերջ պատնա՛ բուն խնդրոյն:
 «Ա. Մամուրի մէջ Բարիզ հրատա-

րակուող «Արեւիկայի Բարիզի» արտասպար մը կար առջի օր Հոնտօնի Հայ գեսպանութեան մը վրայ:

Արեւիկայիցէք որ այդ ահարկու սխալը գործողը փոխանակ Ահարոնեան անուանուելու, Պօղոս Նուպար կոչուէր, ալ ո՛ր պիտի ըլլանէր գահակալականներու օրկանները Ամերիկայէ՛ Բարիզ, Բարիզէ՛ Եգիպտոս և Եգիպտոսէ՛ Պօլիս...:

Մինչդեռ Զաքարիայան պապանձու մը ենթարկուելու են խեղճերը, բերան ունին լեզու չունին, գրիչ ունին՝ մեղան կ'պակսին...:

Անա ինչ որ կուզէ իր շմոշ ներկայել, ամեն անոնց որոնք չեն կրնար հասկնալ թէ մեր սկզբունքը եղած է այս ժողովուրդը՝ չխորել, վրատակ ըլլալով որ եթէ այդ ժողովուրդը՝ չհասկնայ այսօր մեր ըսածը՝ կարելի չէ որ վաղը, միւս օր չսթափի, զանազանելու համար իր շահերուն իրական և ճշմարիտ պաշտպանները:

ԵՍ

ՀԱՅՅԻ, ՍԵՒ ՀԱՐԻՒՐԵԱԿԸ

Մեր ներքին կեանքի մէջ գոյութիւն ունին շատ չարիքներ, ընկերային, հասարակական, պետական վերքեր: Մատնանշել այդ չարիքները, վերքերը և անոնց բուժման միջոցներու մասին խորհել, մամուլի պարտականութիւններէն մէկն է:

Ակարկուած չարիքներու մեծագոյններէն մէկը այն անխորժ և ծանր կացութիւնն է որ ստեղծուած է Հայաստանի սահմաններու մէջ տարրող տրեւտասայ և արեւելահայ հատուածներու միջեւ: Ով որ մասնորոշ արանքով չէ նայած այդ հարցի վրայ կամ ով կամաւոր կոյր ու խուլ չէ ձեւացեր այդ անօրակալի խնդրի հանգէպ, նա համոզուած է, որ ծածկելով, լուծելով հարաւոր չէ այդ երեւոյթը վերջնել հրապարակելն:

«Հայաստանի Զայն» որ խորապէս թշնամի է բոլոր անոնց, որոնք երկու հատուածներու միջեւ թշնամութիւն և հակամարտութիւն կ'ստեղծեն, կանգնած է այն անասկէտի վրայ, թէ «արեւմտահայ-արեւելահայ» խնդիրը մէկն է այն չարիքներէն, որոնց մասին չխօսելը պետական յանցանք է, պետկից կամ անգիտակից գաւաճանութիւն է մեր նորաստեղծ պետութեան շահերու վերաբերմամբ:

Ով ժողովրդի մէջ կ'ապրի, ով իրօք սրտացաւօրէն կը մօտենայ այդ հարցին, ով լըջօրէն կը հետեւի այդ չարիքին, որ օրից օր կը խորացնէ պառակտում երկու հատուածներու միջեւ, նա մեղմէ տարբեր կերպով չի կարող մտածել:

Մեզ պէս չեն խորհրտ սակայն շատերը, այդ շատերէն են նաև «Յունաստան» թերթի խմբագիրները: Անոնք կը յայտարարեն թէ «տանկահայ-առւսահայ» խնդիր պոյութիւն չունի, ով որ այդ մասին կը խօսէ, հակամարտութիւն կ'ստեղծէ երկու հատուածներու միջեւ, նա թշնամի է մեր պետութեան:

«Տանկահայ-առւսահայ» խնդիրները պէտք է՞ հրապարակային քննութեան ենթարկել թէ ոչ, մի հարց է, որու մասին մենք կընդունենք, որ կարելի է վիճել և ունենալ տարբեր համո-

զուտորակ քայլեր պիտի արձակուին իր զորքերը Գոթերէն չուրի, սակայն թէ այդ երկուքը մասնակի է և «արդիւնք է մի քանի տասնեակ անհատներ զերարեքմանով, քան թէ հասարակական յայն զանգուածներին հոգեբանութեան փոփոխութեան իբր հետեւանք», այդ է որ մեզ կը բերէ այն համազման թէ այս երկրի մէջ կը պակսի լուրջ վերաբերում դէպի հասարակական պետական խոշոր երկւայթները: Եւ դժբաղդաբար թէ կատարական և թէ հասարակական շրջաններու մէջ շատ նկատելի է այս երկուքը «Յառաջ» թերթը այսպիսի ներու հուշատարտարն է, բայց միայն այդքանի մէջ չի սահմանափակուիր անոր հասկացողութիւնն ու դերը:

Նա «Հայաստանի Չայն»-ին վերջերս այդ հարցի շուրջ անոր հրատարակած ուսումնասիրական յօդուածաշարքի առիթով կը վերագրէ քաղաքական յետին նպատակներ, կուսակցական նպատակներ:

Եւ «Յառաջ»-ի այդ մտաւայտութիւնը թէ մենք մեր «յետին նպատակներին նպաստող հոգ պատրաստելու համար, կը զբաղուինք այդ հարցով» անոր անհասարակ խոսքերը նորէն նորէն գրգռած է: Եւ հայտնաւոր, անարդար, սպառնալիք, տէրօս չի մնացիր, որ չեն թափած մեր գլխուս Սաօրիպին եւս Ռուսաստանի սև հարիւրակները արտար կարգով «Յառաջ»-ի Հայաստանի կատարութեան կրտսեպանութեան օրգանի այդ խմբագրականը, այնտեղ կուտակուած սպառնալիքներէն ոգեւորուած պիտի փափաքէին Հայաստան վազել և «Յառաջ»-ի միջոցով իրենց խնամք ծառայութիւնը մատուցանել մեր կատարութեան:

Բայց այս սպառնալիքներու մասին յետոյ կայ ուրիշ կարեւոր կէտ մ'ալ մեզ համար, այդ այն է թէ, իրօք մենք կուսակցական նկատումներով է որ կը մտածանք այդ հարցին:

Այս մասին «Յառաջ»-ի կուրսիս խմբագիրներուն կրնանք բարձրաձայն յայտարարել թէ «Հայաստանի Չայն»-ը զբաղուելով ներկայ հարցով, շատ հեռու կանգնած է կուսակցական նշանակումներէ: Այդ խնդրի մէջ նման օճէ անդինց մեզ համար չի եղեր, չկայ և չի կարող լինել: Այդ խնդրը զուտ հաստատային է: Մեզմէ աւելի մեծ չափով թիւրքանայ գաղափարական ինտելիգենցիան և մասան ալ ժամ զրազուած են այդ հարցով: Չտեսնել այդ ծածկի այդ փոստը, կուսակցական Վկաստաններ տեսնել, այդ միան «Յառաջ»-ականներու կարծածութեան յատուկ է: Արդեօք յայտնի չէ՞ «Յառաջ»-ի գեղարվարներուն, որ սակէ 2.3 շաբաթ առաջ թիւրքանայ դուշնակցականները «ուսաստանի թիւրքանայ հայ ցաւատ խորքը հրապարակ հանելու և անոր դարման տանելու նշանակով հաւաքում — խորհրդակցութիւնն ունեցան և եկան այն եզրակացութեանը թէ «Աշխատանք» թիւրքանայ թերթը պէտք է վերջնաբար արտակել Արդեօք յայտնի՞ են «Յառաջ»-ի այդ խորհրդակցութիւններու մէջ արտաստաստած մտքերը վերջինից հարցի մասին: Արդեօք յայտնի՞ է անոնց, որ այդ միեւնոյն խնդրին րով թիւրքանայ գաղափարականներու կողմէ յատուկ պատգամաւորութիւն ներկայացան շարժուս Հայաստանի վարչապետին և պարլամենտի նախագահութեանը:

Եթէ այս փոստերը յայտնի են «Յառաջ»-ի խմբագիրներուն, ապա ինչպէ՞ս մեզ կը վերագրեն կուսակցական նկատումներ. իսկ եթէ անոնց յայտնի չեն այս խոշոր փոստերը, ապա ուրեմն անոնց ո՞րքան իրաւունք ունին յայտարարելու թէ «թիւրքանայ-ուսաստան» խնդիր գոյութիւն չունի, այդ չի՞ հաստատուիր, որ ժողովրդի համար այդ հարցը գոյութիւն ունի, իսկ «Յառաջ»-ի խմբագիրներու համար ոչ, որոնց չփուսը և հետագայը թիւրքանայեցող հետ և

անոնց մասին այսօր հաւատար է չի. նայիներոն հետ անոնց ունեցած յարաբերութեան:

Իսկ ինչ կը վերաբերի «Յառաջ»-ի սև հարիւրակային պօզորմներուն, մենք այդ մասին նոր բան չըսուինք: Եւ արժանաւոր պատասխան այդ մասը գերիստեղծին տուած ենք «Խանութք»-ու առթիւ անոնց մեր դէմ սկըսած սև արշաւանքի ժամանակ:

Իհնք իբրև թանկագին փաստ մեր մօտ կը պահենք նաև «Յառաջ»-ի այս պատմական խմբագրականն ու իբրև նմոյշ այն վիճակական մտայնութեան, որ այսօր «Յառաջ»-ի խմբագիրներու սեփականութիւնն է և որ կը քայ մեզ վերջնականապէս համոզելու, որ այս վերջին 1.2 մասունքն ընթացքին յիշեալ թերթը իւր դիկը կորսնցուցած է և շատ տխուր ծառայութիւն կ'ընէ թէ Հայաստանի պետութեան և թէ հըր պատկանած կուսակցութեանը:

Հարցում մը միայն Այս բարոյաբան անկուսը, որ «Յառաջ»-ը այժմ երեւան կը հանէ, արդիւնք է իւր ներկայ անհասարակ խմբագրութեան ապիկարութեանն թէ կը բղխէ իւր պատկանած կուսակցութեան պատասխանատու մարմնի հայեցողութիւնէն:

Այդ հարցի պատասխանը շատ կարեւոր է: Արդե՞հետեւ «Յառաջ»-ի յիշեալ պոզորմային խմբագրականը պատմական դոկումենտ է:

(Երեւան) «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԱՅՆ»

ԻՆՔՍԱԿՈՂ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ

Հայ ազգին կրօն անթիւ դժբաղդութիւններուն գրեթէ մեծագոյն մասը անկարող առաջնորդներու անգիտակից արարքներէն յառաջ եկած է և ցուալին հոն է որ ամէն ժամանակ պակաս չեն եղած այդպիսիներ. այս անբաղդ ազգը թշուառութենէ թըշուառութիւն, անդունդէ անդունդ գլտորելու, մերթ րարի նպատակներով թողուած և շատ յանախ ալ անձնական զձուձ շահեր հետապնդելով:

Ազգային ճգնաժամի այս օրերուն, գործնալ ամէն կողմ կը վիստան անպատասխանատու և ինքնակոչ առաջնորդներ որոնք կրկին նորանոր փորձանքներ կը հրաւիրեն ազգին զըլխուն, կարծես անբաւական համարելով կրուած տառապանքները, եղած զոհաբերութիւնները և կոտորակումները: Մերթ ատ, մերթ անգ ժողովուրդը վարդազայն երազներով օրորելով և խարխիւլ ստեղծելովու ետեւէ վազող այդ խմբակներ երբէք չեն հետաքրքրուիր, թէ իրենց ձեռնարկին արդիւնքը ինչ կրնայ ըլլալ, անոնց համար կը բաւէ միայն և միայն ազգին քաղաք ունենալ իրենց արամադրութեան տակ, անոնց միակ պահանջը զրամն է. զրամ և նորէն զըրամ: Այն որ չի տար, կամ աւելի ճիշտը զրամին գործածուելու կերպը կը հարցնէ և կամ երաշխաւորութիւն կը պահանջէ, նա դաւածան մըն է, ամէն տեսակ վարկաբեկումի և պատժոյ արժանի, այլևս ամէն կողմ հաւածանքներ և սպառնալիքներ իրարու կը յաղորդեն. սպէտ ամբար միշտ իրենց հետեորդ ունին, որովհետեւ այդ միամիտները խարխիւլ համար պէտք եղածէն աւելի զօրաւոր միջոցներ են դասած և Հայ Հանրապետութեան ընդդէմ ըսուելու գործածումը:

Սուսմ մը մարդիկ կրկնիւոյ մէջ իրենց հասակէն և կարողութիւնէն շատ աւելի մեծ գործերու կը ձեռնարկեն առանց ի նկատի տունելու ներքին և արտաքին թշնամիները և կամ աւելին, առանց կարող ըլլալու ըմբռնել թէ իրենց հետ բարեկամ ներկայացնողները որքան անկեղծ և արքան վստահելի են իրենց խոստումներուն և արարքներուն մէջ. ամբողջ ազգը յուսոյ և ակնկալութեան շարքերուն կ'ապրի, և անսասունց կը յաղորդեն գառն յուսախաբութիւններ, զրկանքներ, կրկնակի տարաբարութիւններ և նոր զուլումներ:

Սիւսմ անգիտակցաբար գործում է ի վնաս ազգին և յօդուտ օտար կատարութեան մը. մեր միաժողութիւնը քաղաքական սա կամ նա նըպատակին յաջողութեանը համար ծառայեցուցած է արդէն օտարը և հիմայ մտմանակ է այլի ս իրեն գարծանելու և տաղտուկ պատճառող տարրերէն օճիկը ազատելու, միթէ միջոց կը պակսի. ոչ, թուրքերուն վերջին գիւտը տեղահանութիւնը, տարագրութիւնը Եւրոպայի մէջ կատարելագործուած է և հիմայ գործարքութեան կը դրուի. Ազգին դժբաղդը ևս կրկնը գաղթականի ցուպը ի ձեռին, նօթի ու կիսամերկ կը սկսին քաղաքէ քաղաք շրջիլ և ազգին ապախինելէ դատ ինչ կրնան ընել այդ հաւածանքները:

Հարիւրաւոր կարիճներու և երիտասարդ ոյժերու, որոնց սոյնքան պէտք ունինք ներկայիս, մահուան պատճառ ըլլալ, քանդուած օճախը հազիւ նորոգած անթիւ ընտանիքներու դժբաղդութեան և տարագրութեան պատճառ ըլլալ, նաև տարբեր նպատակներու համար, և ներկայիս ալ անօթի ու անապաւէն գաղթականները կերակրելու և հոգալու համար ազգին հարստութիւնը մոխիլ, կարծեմ գովելի արարք մը չէ. սակայն ո՞վ է այդ ամբողջ դժբաղդութեանց պատճառը, միթէ անստատոստատու և ինքնակոչ առաջնորդներն չե՞ն:

Մէկ կողմէն դիւցազնական կրիւն մը վերջ Հաճում անձնատուութեան սխուր լուրը իբր կ'ստանանք, միւս կողմէն ուրիշ սպառնալիքներ մը մասին, ամեն օր վարդազոյն լուրեր

կարգաւոյ կը հրճուինք: Մեզմէ մարդ, զրամ և ամեն ինչ կը պահանջուի, պահանջուած այդ բաները տալը պարտականութիւն մըն է, սակայն չէ՞ք կարծեր որ սակէ մէկ քանի ամիս առաջ, կրկնիւոյ ձեռնարկին տեսնարուած զուամորները եթէ չտրուէին, աւելի մեծ չափով Ազգին նպատուած պիտի ըլլար:

Այս սոյգամ ալ տայ ազգը, սակայն ինչ երաշխաւորութիւն կայ մէջտեղը, քանի՞ առ հարիւր յաջողութեան յոյս ունինք մեր այնքան ծանր ձեռնարկին իրականանալուն:

Մեզ առաջնորդող շրջանակները, ըլլան անոնք ուղղակի Հայկ. կառավարութիւն կամ ուրիշ, պէտք է այլևս աղքատութիւն մէջ չթողուն և օրը օրին գառն կամ լաւ կացութեան տեղեակ ընեն զմեզ:

Ազգը առաջնորդելու գործը միայն մեծամասնութեան քուէով չկամ կամ քուէը ընտրուած, պաշտօնական և պատասխանատու մարմնոյ մը կը պատկանի, ինչ որ կը պակսի մեր մէջ:

Հոգ չէ թէ ուշ մտացած ըլլանք, պէտք է ի մի ժողովներ մեր ընտրեալ ուժերը և կազմները այդ մարմինը որը միայն կրնայ շահիլ ազգին ամբողջութեան և կամ գէթ մեծամասնութեան վստահութիւնը, յանձնենք մեր ճակատագրի անոնց ձեռքը և թող վերջ գտնեն ինքնակոչ առաջնորդներու քմահաճոյ արարքները, որոնք վնասէն զատ որև օգուտ չեն կրնար ունենալ:

Բաւ է ալ, քիչ մըն այ դժանջ Ազգին:

Ա. Գ.

Վ Ե Ր Զ Ի Ն Ժ Ա Մ

ԻՏԱԼՕ-ՍԵՐՊԻԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Աժանա Սթէֆան» կը հաղորդէ թէ, Ազգիականի Յնդորոյ կարգ-դրութեան համար, Իտալիոյ և Սուից Սլաւիոյ միջև բանակցութիւնները պիտի վերսկսին նոյն առաջին շաբաթն:

Իտալական պատուիրակութիւնը պիտի կազմուի, վարչապետ ձիօրթիէ և նախարար Մ. Միօրցոնէ և Մ. Գոսմիէ: Այսու հանդերձ, Մ. ձիօրթիէ չպիտի մասնակցի նախնական բանակցութիւններուն:

Սուից Սլաւ պատուիրակիւնը պիտի ըլլան Մ. Թրուսպիչ, Վէսնիչ և Սթ. յանովիչ:

Համար Իտալ թերթերը կիմացնեն թէ, ձիօրթիէ և իր կատարութիւնը շատ գոճաւորութեամբ պիտի կրնան յաղթիլ այն արդիւնքներուն, որ կ'ընդգիւծանան Ազգիականի խնդրին լուծում: Նոյն իսկ եթէ յաջողին խնդիրը կարգադրիլ Սուից Սլաւիոյ հետ, միշտ ակնուկոյտի կայ անգին և առանց անոր Ազգիականի խնդիրը չկրնար լուծուիլ: Տ'Անուսցիոս երբէք միտք ձեռնի Ռիէքան թողելու, եթէ անոր չապահովեն Քարնէթի արդի վիճակը: Մով. Միօրցի պատուիրակիւնները Տարվացիոյ նկատմամբ, միեւնոյն են: Միջո կապուած է ակնուկոյտի հետ, այն յանձնառութեամբ զոր ստանձնեց նախկին վարչապետ Նիթթիի հաւանութեամբ, և որուն համեմատ, Միջո երբէք չպիտի լքէ Տալմացիան:

ԳՈՆՍՐԱՆԹԻՆԻ ԴԻՏԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մ. Սթէթ, «Ռան»-ի Ժընէվի թղթակիցին ղեկուցած է թէ Գոնսթանթինի իր որդոյն մահուան առթիւ վշտահար, չի կրնար հիւսոյ քաղաքական ուկ յայտարարութիւն ընել: Այսուհանդերձ նախկին նախարարը աւելցուցած է. «Այսօրուած եմ ձեզ յիշեցնելու որ, նորին վեհապետութեան հայեցակէտը միշտ միեւնոյն կը շարունակէ մնալ, այն է Հելլէն ժողովուրդին կամքին համակերպիլ»:

Սակայն և այնպէս կաւեցնէ գիտնի» Ժընէվի թղթակիցը, եթէ Գոնսթանթինի, ներկայիս չի յարկը զբաղիլ իր որդոյն մահուան քաղաքական հետեւանքներով, իր արքանականները անդապին գործունէութեան մը ապացոյցը կրուան: Պանդոկին սրահներուն մէջ, ոգևորութեամբ գաւազանական ժողովներ կը զուամարուկն կը խորհին թէ եթէ երբէք Բաւլոս իշխանը կողուէր գահուն, Գոնսթանթին պիտի շարունակէր հետեւիլ արքայական յաղորդութեան խնդիրը խողասիրական միջոցներով կարգադրելու իր քաղաքականութեան:

«Էքօ տը Բարի» Ժընէվի տեղեկացած է թէ, Հիւսէնի մէջ խորհրդակցութիւնները կը շարունակուին նախկին արքայական ընտանիքին և Գոնսթանթինի կողմակիցներու միջև և յայտնի չէ թէ իւր որոշում տրուած է: Այսու հանդերձ, բազմաթիւ անգամներ Պէսիի հէլլէն գեսպանատան հետ հաղորդակցել յետոյ Գոնսթանթինականները Աթէնք զրկուած են գիւտանախարական սուրհանդակ մը նախկին թագաւորին արքանականներէն մին, բարիգեսան թերթին թղթակիցին կրկնած է թէ, Գոնսթանթին միշտ համոզուած է թէ հելլենները իրենք պիտի վերակոչեն: Ա.էն պարագայի մէջ երբէք արամադիր չէ հրաժարելու իր իրաւունքներէն և չպիտի արածուէ որ Բաւլոս իշխանը քահ բարձրանայ:

Հոսմէն կը տեղեկացնեն «Փարնալ»-ը: Մէկը որ Գոնսթանթինի հետ ուղղակի յարաբերութեան մէջ է, յայտարարած է թէ Բաւլոս իշխանին գահ առաջարկել ապարդիւն է, որովհետեւ իշխանը եթէ ընդունի, այդ կը նշանակէ Գոնսթանթինի հրաժարումը և նախկին գահաժողանդին մերժուելը: Արգ. Գոնսթանթին երբէք չէ հրաժարուած գահէն: Դեռ վերջերս կը գրէր. «Մարդ չի կըրնար իրեն չի պատկանած բաւէ մը հրաժարիլ» վերոյիշեալ անձը կ'կարծէ թէ, Մ. Լոյս Յօր զգուշացուցած ըլլալ Վէնիզէլոսը: Յունաստանի մէջ հանրապետութիւն հաստատուելու փորձեր ընելէ:

ԳՈՍԹՈՒՆԻԹՆԻ ՀԱՌԱՏՔԸ

Գերման հրապարակագիր մը գերման թերթի մը մէջ «Գոսթոնիթին» թա-
գաւորը 1916ին» վերնագրով յօդուած մը հրատարակածէ, որ ի մէջ այլոց կրէ-

Մ. ՃՕԼԷԹԻ ԼՕՆՏՈՆ ԿԵՐԹՈՒՑ

Իտալական թերթերը կը ծանուցանեն թէ Մ. Ճօլէթի յառաջիկայ Դեկտեմբեր
ամսուն պիտի երթայ Լոնտոն, Մ. Լոյս Ճօրճի հետ խորհրդակցելու համար:

ՀԵԼԼԷՆ ԳՈՂԻ ՅԱԶՈՐԴՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Յրանս մամուլը կը շարունակէ գրադիլ Թունաստանի արքայական յա-
ղորդութեան հարցով: Մ. Կօլլէն «Փուրնալ տէ Տէպա» մէջ հրատարակած

ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆ

Պօլսէն կը տեղեկացնեն թէ, Մեծ պետութիւնները համոզուած ըլլալով թէ
Թուրք կառավարութիւնը բան մը չկրնար ընել Քէմալի դէմ, պիտի թողաւոր-

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գերման գրամատերներու համաժողովը բանալով Մ. Վոն Սիմօն իր ճա-
ռին մէջ ըսած է: «Մենք պէտք է գործադրութեան ուղղամիտ միջոցով մը հա-

ԻՏԱԼԱԿԱՆ ԱՐՏԱԾՈՒՄՆԵՐԸ

Ըստ «Ճօրնալէ տիթալիայի» այս ամսուայ իտալական արտածութիւնները
պիտի զին վերջին ամսուան քանակը: Այժմ առևտրական հաւասարակշռու-

ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Կիլիկիոյ մէջ, Յրանս յաջողութիւնները կը հաստատուին Զօր. կուպօի
հրամանատարութեամբ գործարին մը, Պայրամիի Քէմալական խումբերը ցըր-

ՊՕԼԸՎԻԿՆԵՐՈՒ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Փուրնալ» կիմանայ Պէրլինէն թէ, Ռուս մամուլը կող մը ուղղելով միջ-
ազգային ընկալուողներու, ցոյց կուտայ Պօլսէնի կողմէ, գործաւորնե-

ՆԱԽԱԳԱՀԻՆ ՆԿԱՐԸ

Յրանսական հանրապետութեան նախագահ Մ. Միլլան լուսանկարուած է
էլիզիէ պալատին մէջ: Բարիդի 15 զլխաւոր լուսանկարչատունները մրցումի

ԱՆԾԱՆՈԹ ԶԻՆԻՈՐԻ ՄԸ

ԲԱՆԹԷՈՒՆԻՆ ՄԷՋ

Յրեւիտիսաններ Մ. Բէյան և Զօր. Մօսիւ ներկայացած են Վարչապե-
տին առևեր, անկէ խնդրելու համար, որ յառաջիկայ Նոյ. 1ին անձանոթ զին-

ԶՕՐ. ՍԱՎՕՅԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Քան» Բարիդի Պուլկար ղեկավար Մ. Ստօֆի մէկ տեսակցութիւնը հրա-
տարակած է, Պուլկարիոյ յանձնառութիւններուն գործադրութեան մասին:

«Մենք պիտի ջանանք, ըսած է պուլկար ղեկավարը, պատասխանելու
Նէոյիի դաշնագրին ստորագրութեամբ, մեր ստանձնած պարտաւորութիւննե-

«Ձս համոզուած եմ թէ, մօտաւոր ապագայի մը մէջ, պարագաները չա-
փազանց նպաստաւոր պիտի ըլլան Սօֆիայի, Պիլկարատի և Պուքրէշի միջև հա-

Գալով Թունաստանի, մենք կը մաղթենք զբացինորու միջև կարելի և
լաւագոյն յարաբերութիւններ մշակել անոր հետ: Սակայն անտեսական մեծ

«Յունաստան, ըստ դաշնագրին պուլկար յանցաւորները անձամբ պատ
ժելու իր իրաւունքէն հրաժարելով, ազնիւ ժէսթ մը ցուցաբերելու կը յուսամ

ՍՈՎԷՏՆԵՐՈՒ ՊԻՏՃԷՆ

Մոսկուայէն կը տեղեկացնեն, Սովիէթներու 1920 տարուայ պիտանէն կը
ներկայացնէ 160 միլիոն ծախք 150 միլիոն եկամուտի դէմ: Այս բացը պի-

Տեղական Լուրեր

ՀԱԿԱՌԱԿ եղանակին սաստկու-
թեան և անձրևներուն, Կէօզ թէփէի
հարակառքերու վաթմանները ա-

Ներուն վրայ սպասող ժողովուրդը,
որոնք հազարակցութեան լարջ զըծ-
ուարութիւններու ենթարկուած են

Շոգեաններու անկանոնութիւնը
մէկ կողմէ, հանրակառքի պաշտօնե-
աներու յամառութիւնը միւս կողմէ,

յուսահատեցնող կացութիւն մը ստեղ-
ծած են արգարև արուարձաններու
խեղճ ընկալութեան համար, որոնք

ԿԻՄԱՆԱՅԻ որ իջմիջէն և կամ
Նոր-Սիփոստէն Պօլիս հասնող բոլոր
նաւերը, բժշկի քննութեան պիտի են-

ՈՐՈՇՈՒՄԷ է որ ինչպէս գործի
վրայ եղող պաշտօնեաններուն նոյնպէս
ալ առկախ մնացածներուն ամսական-

ՀԵԼԼԷՆ ներքին գործոց նախարա-
րութեան շրջաբերական մէկ հրամա-
նով, ոչ չափահաս, 16 տարեկան

Ա Ջ Դ

Հանրայն Պարտոց Վարչութիւն
Իզմիր. Քէրկամա, Էօսէմիշ, Թի-
րէ, Պայընալը, Ուրլա, Չէշմէ, Սիվ-

Մաղիսա, Գարապուրան, Գուշ-Ատա,
Մէնէմէն, Ֆօշա, Նիֆ, Այվալլը, Աք-
հիսար, Գրգազան, Սօմա, Սէօքէ, Նա-

Մուղլա, Միլաս, Պօտրում, Մէրմէրիս,
Ֆէթիշէ և Կէօյճիէլ գաղաններու սահ
մաններուն մէջ, ընթացիկ տարւոյ

բերքերէն հասած և հանելիք ձիթա-
պտուղին տասանորդը աճուրդի զըր-
ուած է: Վարձակալներու տալիք ար-

Փետր, վերատեսչութեան կողմէ ար-
ժանի դատուելու պարագային, նախ-
նական և վերջնական յանձնացումը

կատարել իրեն վերապահելու պայ-
մանաւ, գործառնութեան ձեռնար-
կուած և հարկ եղած տեղերն ալ գե-

կուցուած է: Իզմիրի գաղային համար
ապահովութեան թուղթերով տեղույս
վերատեսչութեան, իսկ միւս տեղերու

համար ալ նոյն վայրերու և կամ քա-
ղաքիս Հանր. Պարտոց Վարչութեան
ղիմել կը ծանուցուի:

ՊԱՇՏՈՆ ԿԸ ՓՆՏՈՒԷ

Բաջ ծանօթ Հայերէն և Թուրքե-
րէն լեզուներու և բաւական հմուտ
Յրանսերէն լեզուի և խորապէս գի-

տակ տնտեսականութեան և կրկնատո-
մարի պաշտօն մը կը փնտռեմ վա-
ճառատան մը մէջ:

Փափաքողը կրնան գիմել խմբա-
դրատուն:

Ա Ջ Դ

Իր երեսուն տարուան փորձառու-
թեամբ ծանօթ բրօքըր Պ. Փան Բալ-
լիտա, Յունաստան, Անգլիերէն և Տո-

մարակալութեան մասնաւոր գասեր
կուտայ: Մանրամասնութեանց և պայ-
մաններու մասին զիմել Պ. Բարսեղ

Կիւլպէն-Կիւսիսի գրասենեակը, Բասաթ
Պարքեան թիւ 42 և թղթավաճառ
Մարինօ Պըլէսայի Սէն Ճօթինի փողոց

Կառնող խանութը:

Ուշադրութեան կը յանձնենք
մեր ընթերցողներուն 4րդ էջի ծանու-
ցումներն և դրամական հրապարակը:

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՆՈՐԱԶԵՒՈՒԹԵԱՆՑ
Լ Ա Ս Ա Մ Ա Ր Ի Թ Ե Ց
Հ. Գ. ՆԻՔՕԹԵԱՆ
ՅՐԱՆԿԱՑ ԹԱՂ ԹԻԻ 64-66
ԱՆԱԽԸՆԹԱՑ ԶԵՂ.Ջ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԳՐԱՆՑ ԵՒ ԿՏՈՐՈՒՄՆԵՐՈՒ ՎՐԱՑ
ՅԱՌԱԶԿԱՑ ԵՐԿՈՒՇԱՐԹԻ 26/8 ՆՈՅՆՄԵՐ 1920
ԱՌԻԹԷՆ ՕԳՏՈՒԵՑԷԲ

Ե Վ Ա Ծ Ե Ն
ԵԼԵՔՏՐՈՒԿԱՆ ԼԱՊՏԵՐՆԵՐ ԵՒ ԲԻԼԵՐ
Ինչո՞ւ հոգ կ'ընէք թէ փողոցները ցեխոտ են ու մութ, թէ շուրերու մէջ
կոխելով օտքերնիդ կը թրջուի ու կը հիւսնդանաք, զիմեցէ իօկոյն, Առաջ-
նորդարանի դրան դէմը
ԶԱՐԵՂ ԳԷՈՐԳԵԱՆԻ
ու մէյմէկ գրգռի ելեքորական ԼԱՊՏԵՐ գնեցէք ձեզի նոր Բիլ երով որոնք
նոր ժամանած են
Նոյն փաճառատան մէջ պիտի գտնէք նաև ճաշակաւոր, ու աժան արդու-
ղարդի ստարիաներ, եւրոպական Շապիկներ, Գուլպաներ, Փանիւններ, Հովա-
նոցներ, Մուշամպաներ և այլն և այլն:
ԻՒՍ ԴԻՐԱՄԱՏՉԵԼԻ ԳԻՆԵՐՈՎ

ՀԱՅԲԵՆԱՍԻՐՆԵՐՈՒՆ . . .

ՓՈՓՈՎԱԶԱՇԱՇԱԿՆԵՐՈՒՆ . . .

ԽՆԱՅՈՂԱՍԻՐՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ . . .

ՕՍՏՐԱՒՈՐ ԳԱՏՐԱՍՏՈՒՍՏ ԱՄԵՆԱԿՆՏԻՐ

«ԱՅԻՆԱՅԵԱՆ» ՄԻԿՈՒԻ ԹՈՒՂԹԸ ԾԽԵՑԷՐ

ՈՐՈՒՆ ՅԱՏԿՈՒԹԻՒՆԵՐԸ ԱՆՈՒՐԱՆԱԼԻ ԵՆ

Փոքիցի + Լ շի-ի Է-ի-ի-ի

Կ. Գոլոյ Միքայել Եփրեմեան և ընկ. տեղադրման մասնագետները

ՏԵՍԱՐ ԳՐՈՒԳՈՐ ՊԻՆԵՍԹԵԱՆ

Հայոց հիւանդանոցի փողոց թիւ 4

ՅՈՒՆԱԿԱՆ ԳԼԽԱՐԿՆԵՐ

Ա. ԱՐԻԱՆՈՒՑՈՒ ԵՒ ԸՆԿ.

182 Ձերմուկի Բ-ի 132

ՍՊԱՍԵՑԷՔ

ՔԱՆԻՄԸ ՕՐԷՆ

Անոնք որ կուզեն նպաստել յունական ճարտարաբանական թող դիմե հրոյիչիւղ վաճառատունը:

ԱՂՈՐՈՆ ԳՐՈՒԳԵԱԾԱՌԵԱՆ

ՎԿԱՑԵԱԼ ԱՍՏՄԱՐՈՑԺ

Իր արուեստը Բայիկ կատարելագործելով, երկարամեայ փորձառութեանը շնորհիւ, կատարելագուտ կը գտնուեն իրեն զիմոց ամենագոյն արհեստ յանձնարողներն իսկ. չսփուտը գիներով կը պատրաստէ բնական յար և նման ճաշակաւոր ու պիտուական աղանդներ (տակիէ, բլաթիէ, քասուլուէ և ին.)

Ամենասատիկ ցաւոյ աղանդները երեք անգամ դարմանելով վերջնականագուտ կը բուժէ և կը լիցնէ:

Ուրբաթ օրեր կէսօրէ վերջ ժամը 3-5 ձրի առամնահանութիւն:

Մաքրութիւն և հակաանեխական միջոցներ կատարել:

Դիմել Գոնաքի գիմաց Էփրեմեանի պանդոկին 8-9 թիւ դարմանատունը:

ՎՊՃԱՌՈՑՈՒՆ ՕՐՈՍՏՊԻԼՆԵՐՈՒ

Հասած են շատ շքեղ և լաւագոյն օթմանակներ եւրոպական գանձաւոր գործարաններու և ի մասնաւորի

Լ Ա Ն Ց Ի Ս

Օթմանակի մը շատ շքեղ և տոկուն: Կը ծախուին նաև կառքերու քառուցուէ ախիւներ:

Անդրեյէ Էփրեմ

Դիմել 28 թ. Կիւլ Փողոց, Գօն Մարշէի գիմաց:

ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՉԱՅՆԸ

Օր-թերթ յազարէան և հասարակական Տարեկան բաժնեկին 700 դր:

ՀՐԱՊԱՐԱԿ

Table with 2 columns: Item name and Price. Includes items like Լոնտօն, Նիւ-Եորք, Բարիկ, etc.

ԴԻՄԵՑԷՐ ՄԻՄԻՆՆԵՆ

Աւետիս Արգարեանի

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՇԱՊԱԿՈՐԾ

Իզմիրի զժուրանահ հասարակութեան արգելն ծանօթ շապկագործ ԱԻՆՏԻՍ ԱՅԳԱՐԵԱՆ այս անգամ իր յանձնարողներէն ստացած քաջալիբուսութեանց վրայ եւրոպ. նորագործ ձեւով իր արգելէն աւելի ճիւղացուցած ըլլալով: Կը հրաւիրէ բոլոր ճաշակի սիրահարները՝ Րէշիտիէ փողոց, Հայոց Առաջնորդարանի գիմաց իր թիւ 1 խանութը, անձամբ ապացուելու համար եւրոպ. շապկի ամէն տեսակներ, օճիքներ, փողկապներ, գիշերանոցներ, վարտիկ, բիճամա, պոյ սքաուրթի շապկներ և այլն:

Գիւնըրը ԽԻՍՏ ԴԻՄԻՍՏՅԵԼԻ Ճշտագանութիւն, կանոնաւորութիւն և անթերիութիւն: Ապագայանքներ կ'ընդունուին փոքրութեան և մեծաբանակ:

ԱՊԱՂՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱՆՆԵՐ

- List of insurance and financial companies: L. ԵԼ Լ. Վարպետեան, NATIONAL UNION SOCIETY LTD., GENERAL INSURANG CO. LTD., PHOENIX ASSURANCE GOMPANY LTD., LIVERPOOL MARINE & GENERAL INSURANCE CO. LTD.

Վերոյիշեալներէ դատ ուրիշ ամեն տեսակ ապահովագրական գործեր ըկ կատարուին հանրածածօթ անգլիական Lloyds-ը և հետ:

ՓԻՏՈՒԿԵՔ ԱՐԵՒԵԼԱՆ ՄԱՄՈՒԼԸ

ԳՈՆ ՄԱՐՏԵԻ ԳԻՄԱՑ Պ. ԳՕՄԲԻ ԼՐԱԳՐԱԿԱԶԱՍԻ ԵՆԱՆՈՒԲԸ

ԱՏԱՆԱԹ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Բայց դաւադրները չլսողներէն ցան Տամատեանը, Ազգ. Միութեանը և Մուշեղ արքայազնի ներկայացնել ֆրանսուսական զին ձեռք: Անշուտ վարչութեան գլուխը կը գտնուէին մարտիկները, որոնք արդէն, պիտի շնորհակալուէին իրեն սպասուածող վտանգը: Ազգ. Միութեանը գիտակից իրենց դերին, որին ինչ որ անհրաժեշտ էր ժողովուրդին փրկութեանը համար Ատանայի պայքարներուն մէջ Առաջնորդը պահ մը զբաղեցուցաւ գողտխաւոր զինով, և տեսնելով, թէ տեղական Միութեանը, որ կը գտնուէր Կ. Ալեքեանի հակողութեան տակ, չէր ծառայել իր շահերուն, նորէն կ'սկսէր գաւազնուութեան Մ. Երէցեանի գաղտնի ապօր մը կուտայ կառավարութեան, Կ. Ալեքեանը ներկայացնելով իր փնտրակար մարզ, և իր ըսածին իրր ապացոյց ներկայացնելով Մուշեղ արքայազնի Ծր. Հանր. Նախագահին ուղղած թողութիւն մէկ օրինակը, որուն մէջ Կ. Ալեքեան մասնանշուած է

իր արքայազնի փոխանորդը Ատանայի մէջ: Կ. Ալեքեան կը հրաժարցուի բայց Գլխիւն ալ կը լուծուի միասին:

Աւաճեանի վարդապետ նոր խընդիրներ կուեննայ Ազգ. Միութեան հետ, քանի որ ստորագրութեան առթիւ Այդ փոքրը կ'ստորագրուէին Ազգ. Միութեանէն, և որովհետև կարելի էր դրամապէս օգտագործել զանոնք. կը ջանայ իւրացնել ստորագրութեան այդ իրաւունքը: Անհամաձայնութիւնը սուր կերպարանք կ'ընտանայ, և Ազգ. Միութեանը, քրիթիքը զրութեան մը մէջ նոր բարդութիւններ չստեղծելու համար, թշուառ պետերը իր պատուակալ անգամ կ'ընդունին իր մէջ:

1920 Օգոստ. 4ի պատմական ուղի վարդապետը կը զնէ նպաստաւոր դրութեան մը մէջ: Կաթողիկ առաջնորդ Քէրէլիկեան եպիսկոպոս կը թողտէ Ազգ. Միութեան գէտ եղած նախատիւքի մը համար, երբ Գեորգ վ. ուրախ, կը ջանար օգտուել այդ նախատիւքէն:

Վերջապէս կը հասնի գաղթականները ստորագրու ձեռնարկը Ազգ. Միութեան և ժողովուրդ իրեն մէկ կամքի արայայտութիւն ոտքի վրայ են: Կը պատրաստուի դաւը Առաջնորդարանի մէջ: Ազգ. Միութեան 15 անդամներէն հինգը իրր վրանագրութեան կառավարութեան ներկայացնե-

լու որոշումը կը տրուի Երկու անձնաւորութիւններ (Տ. Գ. և Մ. Ե.) վարչապետին հանձնարմամբ կը պատրաստեն ցանկը, որուն մէջ կը մտնեն վարդապետին հակադէպին և դաւաճան ընթացքին հակառակորդները Միայն ինչպէս յետոյ թոմի Մարթէն գիտել տուաւ, այդ ցանկին մէջ սխալմամբ Տր. Մայիլեան կը գրուի, փոխանակ Տր. Տէմիրճեանի:

Ծանկը կը ներկայացուի պատկանեալ իշխանութեան, և երբ հրահանք կը տրուի քաղաքին կուսակալ թոմի Մարթէնի, արտաքսել այդ անձերը, նոյն պաշտօնատան մէջ գտնուող ուրիշ հայ պաշտօնեայ մը նկատելով, թէ այդ ցանկը պատրաստուած է Առաջնորդի քրիթի կողմէն, որ Հնչակեաններէ կը բազկանայ, ինքն ալ իր կողմէն ցանկին վրայ կ'աւելցնէ Հնչ. Գործիչ Շահէնի անունը, և թոմի Մարթէն առանց գիտնալու զայն ալ կ'արտաքսէ Ատանայէն տեղակալ Շիւմանեանի և ուրիշներու հետ, իւրաքանչիւր աքսորուածի վճարելով 200 օսմ. ոսկի թղթագրամ:

Ան հինչ որ կրցինք ամփոփել մեզի հասած ընդարձակ տեղեկագրէ մը, Ատանայի առաջնորդ Գեորգ վարդապետ Այլանեանի մասին, որուն վատահամբաւ և ամբարհաւակ դերը կը մասնանշուի այս պահուս ամենուն կողմէ անխտրի, և որոնց կողմէն ին-

քը կը խարանուի դաւաճանութեան յանցանքով:

Հիմա ուրիշն երբ Գեորգ վարդապետէն խղուած է ժողովուրդը, և երբ կ'իլիկիոյ կաթողիկոսը Չահէնէն ալ հետեւ կը փախչի, չմտնալու համար ժողովուրդին, երբ Ազգ. Միութեանը կազմալուծուած է իր կարողագոյն անդամներուն արտաքսումով, երբ Գ. Տամատեան չէզոքացած գիւրթի մը մէջ կը գտնուի, երեւակայելու է այն ողբալի կացութիւնը, որուն մէջ կը գտնուի կ'իլիկիոյ և մասնաւորապէս Ատանայի ժողովուրդը, շնորհիւ անարժան և դրամապաշտ առաջնորդի մը մեքենայած դաւեարան և խաղբուրուն:

Պօղոս Կակաչեան

ՆՇԱՆԱՏԱՅԱԿՆԵՐՈՒ ՎՔՐԵՑ

Գունուոր, բե և սմեն տեսակ լեզուներով ու տառերով կ'պատրաստէ գեղեցիկ նշանաւորութիւններ: Փափաքողք դիմեն Միլիտան Տգարն Բառաք Եւստափ Ենչեֆերու- յէլ

ՀԱՅ ԶԱՅՆ

Տէր և Տնօրէն. Ս. Կէպէնիան Բաժնեկին տարեկան 800 Հասցէ փոստարկը 62 Ատանա